ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«07» մարտի 2025թ. ՆՄՌ/304 -Ա

ք. Արմավիր

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության պետի պարտականությունները կատարողի 2025 թվականի մարտի 6-ի N//4617-2025 գրությունը, գրությամբ նկարագրված հողամասերի վերաբերյալ տեղեկատվությունը և հիմք հանդիսացող փաստաթղթերը ներկայացնելու գործընթացն ապահովելու նպատակով.

որոշում եմ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավարին (Ա. Այվազյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 5 աշխատանքային օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական Բարսեղ Նիկողոսյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2025-03-07 12:26:19 GMT+4
Հավաստագրված է ԷԿԵՆԳ-ի կողմից
eID

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2025 թվականի մարտի 07 -ի
N ՄՈ/304 -Ա որոշման

Կազմ
աշխատանքային խմբի

Աշխատանքային խմբի ղեկավար՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ՝
Արթուր Այվազյան.

Աշխատանքային խմբի անդամներ՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի պետ՝
Արմեն Դարբինյան.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ՝
Լիաննա Հարությունյան.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության գլխավոր մասնագետ՝
Գևորգ Գևորգյան:

Գլխավոր քարտուղար՝ **Ա. Հովհաննիսյան**

Недействительная подпись

VERIFIED OCSP 07.03.2025 12:08:56 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023